Հավելված 5

«ԷԱՃԱՊՁԲ ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/21 »* ծածկագրով

էլեկտրոնային աճուրդի հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/21-1

ք. Երևան ____/_____/2021թ.

« «ՀՀ պետական եկամուտների կոմիտե» »-ը ի դեմս Էդգար Գևորգյան ի, որը գործում է « «ՀՀ պետական եկամուտների կոմիտե» »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և « ՌԻՄՆԱ ՍՊԸ »-ը, ի դեմս տնօրեն Ռիմա Նազարյան ի, որը գործում է « ՌԻՄՆԱ ՍՊԸ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։ Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով։

2. **ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի։

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից մինչև հրավերը հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա

փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ձնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը։

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը։

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները։

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին։

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 9985500.00 AMD(ինը միլիոն ինը հարյուր ութսունհինգ հազար հինգ հարյուրդրամ) ՀՀ դրամ :[629][1]

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը։

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը։

ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար։ Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով։ Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Վաճառողին վճարումներ չեն կատարվում։ [730][2]

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով։ Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին։ Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային

օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

-

4. **ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

—

8 31[3]

5. **ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. **ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի *0,5* (*զրո ամբողջ հինգ տասնորդական*) տոկոսի չափով:[9 3][4] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի *0,05* (*զրո*

ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով։

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով։

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց։

7. **ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել։ Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը։ Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին։

8. **ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը։

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը [5]։

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության։ Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր

համաձայնության։

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար։ Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է։

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում։

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը։

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման։

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու

օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

11[6]

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը

տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3,N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

—

10. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
«ՀՀ պետական եկամուտների կոմիտե»	**ՌԻՄՆԱ ՍՊԸ**
ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7	**Բաբայան 36,72/1**
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	**Ակբա Բանկ ԲԲԲ Ձեյթուն մ/ճ**
900011054013	**220410124352000**
02647057	**01022893** Digitally signed by NAZARYAN RIMA 5910630318 Date: 2021.08.10 15:48:21 AMT
Digitally signed by GEVORGYAN	
----------	**----------**
/ստորագրություն/	**/ստորագրություն/**
Կ.Տ	**Կ.Տ**

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը

չհակասող դրույթներ:

[1]29 6 *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[2]30 7 *Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[3]31 8 *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

[4]9 *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[5]10 *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[6]11 *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[7]12 *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

[8]13 *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
____/_____/2021թ. կնքված
ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/21 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

Ապրանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	արտադրողի անվանումը*	տեխնիկական բնութագիրը
1	18441100/7	Գլխարկ՝ բրդյա (կիսաբրդյա)	ՌԻՄՆԱ ՍՊԸ	Մուգ կապույտ (2311 արտիկուլի, 67% բուրդ, 33% Պ/Է, 317գր.քառ. մետր խտությամբ) կտորից՝ գլխարկաբոլորքով. բաղկացած է սև լաքապատ գլխարկահովարից, որի վրա 2 փոքր մետաղյա կոճակով ամրացված է ոսկեզօծ զարդապարան (գոտի), գլխարկաբոլորքը՝ մուգ կապույտ, գլխարկաբոլորքի վերևի և գագաթի միացման տեղով անցնում է 2 մմ լայնքով կապույտ մահուդից եզրակար, առջևի կենտրոնական մասում ամրացվում է ոսկեգույն մետաղից փոքր գլխարկանշան՝ Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության տարբերանշանի

				պատկերով: Այլ պայմաններ. - Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը, բեռնաթափումը և տեսակավորումը իրականացնում է Կատարողը: - Չափսերը տրամադրվելու են պատվիրատուի կողմից: - Կատարողը պետք է ունենա կտորների համապատասխան արտիկուլների հավաստագիր: - Ապրանքը պետք է լինի առանձին փաթեթավորված (կոշիկների յուրաքանչյուր զույգը առանձին արկղերով), յուրաքանչյուրի վրա տեսանելի գրված լինի չափսը (հասակը), ապրանքի և արտադրողի ամբողջական անվանումը: -Ապրանքի վրա պետք է կարված լինի պիտակ, որի վրա նշված լինի արտադրողի անվանումը, կտորի բաղադրությունը, չափսը և այլն:
2	18441160/5	Կեպի կիս աբամբակյա	ՌԻՄՆԱ ՍՊԸ	Մուգ կապույտ (2311 արտիկուլի, 67% բուրդ, 33% Պ/Է, 317գր.քառ. մետր խտությամբ) կտորից՝ գլխարկաբոլորքով և հովարով. գլխարկաբոլորքի կենտրոնում ամրացված է պլաստմասսայից ամրակ, հետևամասում՝ պլաստմասսայից կարգավորիչ, գլխարկաբոլորքի առջևի կենտրոնական մասում ասեղնագործվում են հայերենով «Մաքսային ծառայություն» բառերը, իսկ հետևամասում՝ անգլերեն՝ «customs» բառը: Այլ պայմաններ. - Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը, բեռնաթափումը և տեսակավորումը իրականացնում է Կատարողը: - Չափսերը տրամադրվելու են պատվիրատուի կողմից: - Կատարողը պետք է ունենա կտորների համապատասխան արտիկուլների հավաստագիր: - Ապրանքը պետք է լինի առանձին փաթեթավորված (կոշիկների յուրաքանչյուր զույգը առանձին արկղերով), յուրաքանչյուրի վրա տեսանելի գրված լինի չափսը (հասակը), ապրանքի և արտադրողի ամբողջական անվանումը: -Ապրանքի վրա պետք է կարված լինի պիտակ, որի վրա նշված լինի արտադրողի

				անվանումը, կտորի բաղադրությունը, չափսը և այլն:
4	18421170/5	Գոտի՝ տաբատի, սինթետիկ	ՌԻՄՆԱ ՍՊԸ	35 մմ լայնությամբ, մետաղյա ճարմանդով, իսկ մաքսային զննում և հատուկ հանձնարարություններ կատարող մաքսային մարմնի հանրային ծառայողների համար՝ հատուկ միջոցներ և զենք կրելու համար նախատեսված պատյանով: Այլ պայմաններ. - Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը, բեռնաթափումը և տեսակավորումը իրականացնում է Կատարողը: - Չափսերը տրամադրվելու են պատվիրատուի կողմից: - Կատարողը պետք է ունենա կտորների համապատասխան արտիկուլների հավաստագիր: - Ապրանքը պետք է լինի առանձին փաթեթավորված (կոշիկների յուրաքանչյուր զույգը առանձին արկղերով), յուրաքանչյուրի վրա տեսանելի գրված լինի չափսը (հասակը), ապրանքի և արտադրողի ամբողջական անվանումը: -Ապրանքի վրա պետք է կարված լինի պիտակ, որի վրա նշված լինի արտադրողի անվանումը, կտորի բաղադրությունը, չափսը և այլն:
9	35811240/3	Կրծքի մակագրություն	ՌԻՄՆԱ ՍՊԸ	Վերնազգեստի կրծքամասի վրա ամրացվող կտոր՝ 13x4սմ չափսով, որի վրա հայերենով և անգլերենով ասեղնագործված են «Մաքսային ծառայություն» և «Customs service» բառերը: Այլ պայմաններ. - Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը, բեռնաթափումը և տեսակավորումը իրականացնում է Կատարողը: - Չափսերը տրամադրվելու են պատվիրատուի կողմից: - Կատարողը պետք է ունենա կտորների համապատասխան արտիկուլների հավաստագիր: - Ապրանքը պետք է լինի առանձին փաթեթավորված (կոշիկների յուրաքանչյուր զույգը առանձին արկղերով), յուրաքանչյուրի վրա տեսանելի գրված լինի չափսը (հասակը), ապրանքի և արտադրողի ամբողջական անվանումը: -Ապրանքի վրա պետք է կարված լինի պիտակ, որի վրա նշված լինի արտադրողի

				անվանումը, կտորի բաղադրությունը, չափը և այլն:
10	35811240/4	Մաքսային մարմնի հանրային ծառայողների թևքանշան	ՌԻՄՆԱ ՍՊԸ	Հայաստանի Հանրապետության մաքսային մարմնի հանրային ծառայողները համազգեստի ձախ թևքին՝ ուսակարից 80 մմ ներքև, կրում են Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության տարբերանշանի պատկերով թևքանշան: Թևքանշանը՝ 80 մմ x 100 մմ չափսերով. կտորի վրա գունավոր ասեղնագործվում է Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության տարբերանշանը: Այլ պայմաններ. - Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը, բեռնաթափումը և տեսակավորումը իրականացնում է Կատարողը: - Չափսերը տրամադրվելու են պատվիրատուի կողմից: - Կատարողը պետք է ունենա կտորների համապատասխան արտիկուլների հավաստագիր: - Ապրանքը պետք է լինի առանձին փաթեթավորված (կոշիկների յուրաքանչյուր զույգը առանձին արկղերով), յուրաքանչյուրի վրա տեսանելի գրված լինի չափը (հասակը), ապրանքի և արտադրողի ամբողջական անվանումը: -Ապրանքի վրա պետք է կարված լինի պիտակ, որի վրա նշված լինի արտադրողի անվանումը, կտորի բաղադրությունը, չափը և այլն:
13	18421170/6	Գոտի՝ տաբատի, սինթետիկ (կանացի)	ՌԻՄՆԱ ՍՊԸ	35 մմ լայնությամբ, մետաղյա ճարմանդով: Այլ պայմաններ. - Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը, բեռնաթափումը և տեսակավորումը իրականացնում է Կատարողը: - Չափսերը տրամադրվելու են պատվիրատուի կողմից: - Կատարողը պետք է ունենա կտորների համապատասխան արտիկուլների հավաստագիր: - Ապրանքը պետք է լինի առանձին փաթեթավորված (կոշիկների յուրաքանչյուր զույգը առանձին արկղերով), յուրաքանչյուրի վրա տեսանելի գրված լինի չափը (հասակը), ապրանքի և արտադրողի ամբողջական անվանումը: -Ապրանքի վրա պետք է

				կարված լինի պիտակ, որի վրա նշված լինի արտադրողի անվանումը, կտորի բաղադրությունը, չափսը և այլն:
17	35811190/11	Մաքսային ծառայության կրտսեր լեյտենանտից մինչև մաքսային ծառայության գնդապետի ուսադիրներ (կոշտ կարվող)	ՌԻՄՆԱ ՍՊԸ	Ուղղանկյուն են. Մակերեսը՝ մուգ կապույտ գործվածքով (35% բամբակ, 65% Պ/Է, 270գր.քառ.մետր), վերնամասը՝ բազմանկյուն, ոսկեգույն մակաշերտով: Մաքսային ծառայության գնդապետի, փոխգնդապետի և մայորի կոչումներ ունեցող ծառայողները կրում են 2 մակաշերտով, իսկ կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի կոչում ունեցող ծառայողները՝ 1 մակաշերտով ուսադիրներ: 2) շնորհված կոչմանը համապատասխան՝ ա. մաքսային ծառայության գնդապետի կոչում ունեցող ծառայողների ուսադիրների վրա տեղադրվում են 20մմ տրամագծով երեք, փոխգնդապետի կոչում ունեցող ծառայողների ուսադիրների վրա՝ երկու, մայորի կոչում ունեցող ծառայողների ուսադրիների վրա՝ մեկ, ոսկեզօծ հնգաթև աստղեր, բ. մաքսային ծառայության կապիտանի կոչում ունեցող ծառայողների ուսադիրների վրա տեղադրվում են 13մմ տրամագծով չորս, ավագ լեյտենանտի կոչում ունեցող ծառայողների ուսադիրների վրա՝ երեք, լեյտենանտի կոչում ունեցող ծառայողների ուսադիրների վրա՝ երկու և կրտսեր լեյտենանտի կոչում ունեցող ծառայողների ուսադիրների վրա՝ մեկ, ոսկեզօծ հնգաթև աստղեր, գ. գնդապետի, փոխգնդապետի և մայորի ուսադիրների վրա տեղադրվում են 20մմ լայնքով ոսկեզօծ թելերով հյուսքաձև գործվածքի մեկ շերտ՝ ուսադիրի ստորին եզրից 5մմ հեռավորության վրա, ուսադիրի երկայնական առանցքային գծին ուղղահայաց, դ. կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի ուսադիրների վրա տեղադրվում են 10 մմ լայնքով ոսկեզօծ թելերով հյուսքաձև գործվածքի շերտ՝ ուսադիրի ստորին եզրից 5 մմ հեռավորության վրա, ուսադիրի երկայնական առանցքային գծին ուղղահայաց: Այլ

				պայմաններ. - Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը, բեռնաթափումը և տեսակավորումը իրականացնում է Կատարողը: - Չափսերը տրամադրվելու են պատվիրատուի կողմից: - Կատարողը պետք է ունենա կտորների համապատասխան արտիկուլների հավաստագիր: - Ապրանքը պետք է լինի առանձին փաթեթավորված (կոշիկների յուրաքանչյուր զույգը առանձին արկղերով), յուրաքանչյուրի վրա տեսանելի գրված լինի չափսը (հասակը), ապրանքի և արտադրողի ամբողջական անվանումը: -Ապրանքի վրա պետք է կարված լինի պիտակ, որի վրա նշված լինի արտադրողի անվանումը, կտորի բաղադրությունը, չափսը և այլն:
18	35811190/12	Մաքսային ծառայության կրտսեր լեյտենանտից մինչև մաքսային ծառայության գնդապետի ուսադիրներ (կոշտ հանվող)	ՌԻՄՆԱ ՍՊԸ	Ուղղանկյուն են. Մակերեսը՝ մուգ կապույտ (35% բամբակ, 65% Պ/Է, 270գր.քառ.մետր) գործվածքով, վերնամասը՝ բազմանկյուն, ոսկեգույն մակաշերտով: Մաքսային ծառայության գնդապետի, փոխգնդապետի և մայորի կոչումներ ունեցող ծառայողները կրում են 2 մակաշերտով, իսկ կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի կոչում ունեցող ծառայողները՝ 1 մակաշերտով ուսադիրներ: 2) շնորհված կոչմանը համապատասխան՝ ա. մաքսային ծառայության գնդապետի կոչում ունեցող ծառայողների ուսադիրների վրա տեղադրվում են 20 մմ տրամագծով երեք, փոխգնդապետի կոչում ունեցող ծառայողների ուսադիրների վրա՝ երկու, մայորի կոչում ունեցող ծառայողների ուսադրիների վրա՝ մեկ, ոսկեզօծ հնգաթև աստղեր, բ. մաքսային ծառայության կապիտանի կոչում ունեցող ծառայողների ուսադիրների վրա տեղադրվում են 13 մմ տրամագծով չորս, ավագ լեյտենանտի կոչում ունեցող ծառայողների ուսադիրների վրա՝ երեք, լեյտենանտի կոչում ունեցող ծառայողների ուսադիրների վրա՝ երկու և կրտսեր լեյտենանտի կոչում ունեցող ծառայողների ուսադիրների վրա՝

				մեկ, ոսկեզօծ հնգաթև աստղեր, գ. գնդապետի, փոխգնդապետի և մայորի ուսադիրների վրա տեղադրվում են 20 մմ լայնքով ոսկեզօծ թելերով հյուսքաձև գործվածքի մեկ շերտ՝ ուսադիրի ստորին եզրից 5 մմ հեռավորության վրա, ուսադիրի երկայնական առանցքային գծին ուղղահայաց, դ. կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի ուսադիրների վրա տեղադրվում են 10 մմ լայնքով ոսկեզօծ թելերով հյուսքաձև գործվածքի շերտ՝ ուսադիրի ստորին եզրից 5 մմ հեռավորության վրա, ուսադիրի երկայնական առանցքային գծին ուղղահայաց. 3) ուսադիրները վերին մասում ամրացվում են Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության տարբերանշանի պատկերով մեկական ոսկեգույն կոճակով: Այլ պայմաններ. - Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը, բեռնաթափումը և տեսակավորումը իրականացնում է Կատարողը: - Չափսերը տրամադրվելու են պատվիրատուի կողմից: - Կատարողը պետք է ունենա կտորների համապատասխան արտիկուլների հավաստագիր: - Ապրանքը պետք է լինի առանձին փաթեթավորված (կոշիկների յուրաքանչյուր զույգը առանձին արկղերով), յուրաքանչյուրի վրա տեսանելի գրված լինի չափսը (հասակը), ապրանքի և արտադրողի ամբողջական անվանումը: -Ապրանքի վրա պետք է կարված լինի պիտակ, որի վրա նշված լինի արտադրողի անվանումը, կտորի բաղադրությունը, չափսը և այլն:
19	35811200/5	Աստղեր կրտսեր լեյտենանտից կապիտանի ուսադիրների	ՌԻՄՆԱ ՍՊԸ	Ալյումինե համաձուլվածքից ոսկեզօծ հնգաթև 13 մմ տրամագծով: Այլ պայմաններ. - Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը, բեռնաթափումը և տեսակավորումը իրականացնում է Կատարողը: - Չափսերը տրամադրվելու են պատվիրատուի կողմից: - Կատարողը պետք է ունենա կտորների համապատասխան արտիկուլների հավաստագիր: - Ապրանքը

				պետք է լինի առանձին փաթեթավորված (կոշիկների յուրաքանչյուր զույգը առանձին արկղերով), յուրաքանչյուրի վրա տեսանելի գրված լինի չափսը (հասակը), ապրանքի և արտադրողի ամբողջական անվանումը: -Ապրանքի վրա պետք է կարված լինի պիտակ, որի վրա նշված լինի արտադրողի անվանումը, կտորի բաղադրությունը, չափսը և այլն:
20	35811200/6	Աստղեր մայորից գնդապետ	ՌԻՄՆԱ ՍՊԸ	Ալյումինե համաձուլվածքից ոսկեզօծ հնգաթև աստղ 22 մմ տրամագծով: Այլ պայմաններ. - Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը, բեռնաթափումը և տեսակավորումը իրականացնում է Կատարողը: - Չափսերը տրամադրվելու են պատվիրատուի կողմից: - Կատարողը պետք է ունենա կտորների համապատասխան արտիկուլների հավաստագիր: - Ապրանքը պետք է լինի առանձին փաթեթավորված (կոշիկների յուրաքանչյուր զույգը առանձին արկղերով), յուրաքանչյուրի վրա տեսանելի գրված լինի չափսը (հասակը), ապրանքի և արտադրողի ամբողջական անվանումը: -Ապրանքի վրա պետք է կարված լինի պիտակ, որի վրա նշված լինի արտադրողի անվանումը, կտորի բաղադրությունը, չափսը և այլն:
22	39561133/3	Տարածքային տարբերանշան	ՌԻՄՆԱ ՍՊԸ	Վերնազգեստի կրծքամասի վրա ամրացվող, եզրերը դեղին ասեղնագործված է «ԱՆՎԱՆՈՒՄ տարածաշրջանային մաքսատուն-վարչություն» բառերը: Այլ պայմաններ. - Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը, բեռնաթափումը և տեսակավորումը իրականացնում է Կատարողը: - Չափսերը տրամադրվելու են պատվիրատուի կողմից: - Կատարողը պետք է ունենա կտորների համապատասխան արտիկուլների հավաստագիր: - Ապրանքը պետք է լինի առանձին փաթեթավորված (կոշիկների յուրաքանչյուր զույգը առանձին արկղերով), յուրաքանչյուրի վրա տեսանելի գրված լինի չափսը

				(հասակը), ապրանքի և արտադրողի ամբողջական անվանումը: -Ապրանքի վրա պետք է կարված լինի պիտակ, որի վրա նշված լինի արտադրողի անվանումը, կտորի բաղադրությունը, չափսը և այլն:

* Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:

ԳՆՈՐԴ

«ՀՀ պետական եկամուտների կոմիտե»

Հասցե՝ ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7

ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

900011054013

02647057

Էդգար Գևորգյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by GEVORGYAN EDGAR 4010690054
Date: 2021.08.11 15:20:38 AMST

ՎԱՃԱՌՈՂ

ՌԻՄՆԱ ՍՊԸ

Հասցե՝ Բաբայան 36,72/1

Ակբա Բանկ ԲԲԲ Զեյթուն մ/ճ

220410124352000

01022893

Ռիմա Նազարյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by NAZARYAN RIMA 5910630318
Date: 2021.08.10 15:49:55 AMT

Հավելված N 2
____/_____/2021թ. կնքված
ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/21 ծածկագրով պայմանագրի

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
					հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
1	հատ	5700.00	3705000.00	650	ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու 3,7	650	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ընթացքում
2	հատ	3000.00	303000.00	101	ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու 3,7	101	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ընթացքում
4	հատ	1440.00	864000.00	600	ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու 3,7	600	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա

							ըն թացքում
9	հատ	490.00	514500.00	1050	ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու 3,7	1050	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ըն թացքում
10	հատ	300.00	600000.00	2000	ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու 3,7	2000	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ըն թացքում
13	հատ	1440.00	360000.00	250	ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու 3,7	250	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ըն թացքում
17	զույգ	1000.00	1500000.00	1500	ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու 3,7	1500	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ըն թացքում
18	զույգ	1000.00	1500000.00	1500	ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու 3,7	1500	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ըն թացքում
19	հատ	30.00	60000.00	2000	ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու 3,7	2000	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30

							օրացույցային օրվա ըն թացքում
20	հատ	39.92	40000.00	1002	ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու 3,7	1002	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ըն թացքում
22	հատ	490.00	539000.00	1100	ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու 3,7	1100	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ըն թացքում

* Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՐԴ
«ՀՀ պետական եկամուտների կոմիտե»
Հասցե՝ ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
900011054013
02647057
Էդգար Գևորգյան
_____
/ստորագրություն/

ՎԱՃԱՌՈՂ
ՌԻՄՆԱ ՍՊԸ
Հասցե՝ Բաբայան 36,72/1
Ակբա Բանկ ԲԲԲ Ձեյթուն մ/ճ
220410124352000
01022893
Ռիմա Նազարյան
_____
/ստորագրություն/

Digitally signed by NAZARYAN RIMA 5910630318
Date: 2021.08.10 15:46:44 AMT

Digitally signed by GEVORGYAN EDGAR 4010690054
Date: 2021.08.11 15:20:54 AMST

५.S

Հավելված N 3
____/_____/2021թ. կնքված
ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/21 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			Հնվ.	Փտր.	Մրտ.	Ապր.	Մայ.	Հուն.	Հուլ.	Օգս.	Սեպ.	Հոկ.	Նոյ.	Դեկ.	Ընդամենը
1	18441100/7	Գլխարկ՝ բրդյա (կիսաբրդյա)							3705000.00	3705000.00	3705000.00	3705000.00	3705000.00	3705000.00	3705000.00
2	18441160/5	Կեպի կիսաբամբակյա							303000.00	303000.00	303000.00	303000.00	303000.00	303000.00	303000.00
4	18421170/5	Գոտի՝ տաբատի, սինթետիկ							864000.00	864000.00	864000.00	864000.00	864000.00	864000.00	864000.00
9	35811240/3	Կրծքի մակա							51450	51450	51450	51450	51450	51450	51450

		գրություն							0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
10	35811240/4	Մաքսային մարմնի հանրային ծառայողների թևքանշան							600000.00	600000.00	600000.00	600000.00	600000.00	600000.00	600000.00
13	18421170/6	Գոտի՝ տաբատի, սինթետիկ (կանացի)							360000.00	360000.00	360000.00	360000.00	360000.00	360000.00	360000.00
17	35811190/11	Մաքսային ծառայության կրտսեր լեյտենանտից մինչև մաքսային ծառայության գնդապետի ուսադիրներ (կոշտ կարվող)							1500000.00	1500000.00	1500000.00	1500000.00	1500000.00	1500000.00	1500000.00
18	35811190/12	Մաքսային ծառայության կրտսեր լեյտենանտից մինչև մաքսային ծառայության գնդապետի							1500000.00	1500000.00	1500000.00	1500000.00	1500000.00	1500000.00	1500000.00

		ուսադիրներ (կոշտ հանվող)													
19	35811200/5	Աստղեր կրտսեր լեյտ ենանտից կապիտանի ուսադիրների							60000.00	60000.00	60000.00	60000.00	60000.00	60000.00	60000.00
20	35811200/6	Աստղեր մայորից գնդապետ							40000.00	40000.00	40000.00	40000.00	40000.00	40000.00	40000.00
22	39561133/3	Տարածքային տարբերանշան							539000.00	539000.00	539000.00	539000.00	539000.00	539000.00	539000.00

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ
«ՀՀ պետական եկամուտների կոմիտե»
Հասցե՝ ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
900011054013
02647057
Էդգար Գևորգյան
_____
/ստորագրություն/

ՎԱՃԱՌՈՂ
ՌԻՄՆԱ ՍՊԸ
Հասցե՝ Բաբայան 36,72/1
Ակբա Բանկ ԲԲԲ Ձեյթուն մ/ճ
220410124352000
01022893
Ռիմա Նազարյան
_____
/ստորագրություն/

Digitally signed by NAZARYAN RIMA 5910630318
Date: 2021.08.10 15:46:03 AMT

Digitally signed by GEVORGYAN EDGAR 4010690054
Date: 2021.08.11 15:21:11 AMST

५.S

Հավելված N 4
____/_____/2021թ. կնքված
ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/21 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «____» 20___ թ.
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20__թ.
Պայմանագրի համարը՝ ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/21-1
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «_____» «_____» 20___թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	Գլխարկ՝ բրդյա (կիսաբրդյա)							

2	Կեպի կիսաբամբակյա							
4	Գոտի՝ տաբատի, սինթետիկ							
9	Կրծքի մակագրություն							
10	Մաքսային մարմնի հանրային ծառայողների թևքանշան							
13	Գոտի՝ տաբատի, սինթետիկ (կանացի)							
17	Մաքսային ծառայության կրտսեր լեյտենանտից մինչև մաքսային ծառայության գնդապետի ուսադիրներ (կոշտ կարվող)							
18	Մաքսային ծառայության կրտսեր լեյտենանտից մինչև մաքսային ծառայության գնդապետի ուսադիրներ (կոշտ հանվող)							
19	Աստղեր կրտսեր լեյտենանտից կապիտանի ուսադիրների							
20	Աստղեր մայորից							

	գնդապետ							
22	Տարածքային տարբերանշան							

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված N 4.1
____/_____/2021թ. կնքված
ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/21 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ «ՀՀ պետական եկամուտների կոմիտե» -ի (այսուհետ՝ Գնորդ) և ՌԻՄՆԱ ՍՊԸ (այսուհետ՝ Վաճառող)
միջև 20 թ._____ -ին կնքված N ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/21-1
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով
Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
Գլխարկ՝ բրդյա (կիսաբրդյա)	հատ	
Կեպի կիսաբամբակյա	հատ	
Գոտի՝ տաբատի, սինթետիկ	հատ	
Կրծքի մակագրություն	հատ	
Մաքսային մարմնի հանրային ծառայողների թևքանշան	հատ	
Գոտի՝ տաբատի, սինթետիկ (կանացի)	հատ	
Մաքսային ծառայության կրտսեր լեյտենանտից մինչև մաքսային ծառայության գնդապետի ուսադիրներ (կոշտ կարվող)	զույգ	
Մաքսային ծառայության կրտսեր լեյտենանտից մինչև մաքսային ծառայության գնդապետի ուսադիրներ (կոշտ հանվող)	զույգ	
Աստղեր կրտսեր լեյտենանտից կապիտանի ուսադիրների	հատ	
Աստղեր մայորից գնդապետ	հատ	
Տարածքային տարբերանշան	հատ	

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական

օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____

ազգանուն, անուն

_____

Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____

ազգանուն, անուն

_____

Ստորագրություն